



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 05Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2015  
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի ԹԻՎ 25Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ մասերը, ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.12.2017թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-34-Ն ՀՀ օրենքը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2015 թվականի մայիսի 18-ի «ՀՀ դատարաններում գործերի բաշխման առանձնահատկությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 11Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 25Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Որոշման 4-րդ կետը «անդամներին» բառից հետո լրացնել «, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորներին» բառերով,

2) Որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «քսանօրյա» բառերը փոխարինել «տասնօրյա» բառերով, իսկ «և գործուղման ժամկետի ավարտին նախորդող երեսօրյա ժամանակահատվածը» բառերը հանել,

3) Որոշման 2.1-րդ հավելվածի 5-րդ կետի «քսանօրյա» բառերը փոխարինել «տասնօրյա» բառերով,

4) Որոշման 3-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի,

- 5) Որոշման 4-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի:  
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 26-ից:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

**2018թ. հունվարի 25  
ք.Երևան**

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

**Հավելված 1**  
**Հայաստանի Հանրապետության**  
**դատարանների նախագահների խորհրդի**  
**2018 թվականի հունվարի 25-ի թիվ 05L որոշման**

**«Հավելված 3**  
**Հայաստանի Հանրապետության**  
**դատարանների նախագահների խորհրդի 2015**  
**թվականի մայիսի 18-ի թիվ 25L որոշման**

**ՀՀ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ**  
**ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՏՈԿՈՍԱԶԱՓԵՐԸ**

N	ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ	ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՐԾԵՐԻ ՏՈԿՈՍԱԶԱՓ
1.	ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	Վազգեն Ռշտունի	90%
2.	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	Ռուբեն Վարդազարյան (պաշտոնակատար)	5%
3.	Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան	Գագիկ Սարգսյան	90%
4.	Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան	Սուրեն Մնոյան	100%
5.	Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	Վարդան Ստեփանյան	90%
6.	Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան	Հրաչիկ Սարգսյան	90%
7.	Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան	Մուշեղ Հարությունյան	90%
8.	Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան	Սամվել Մարդանյան	90%
9.	Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան	Գագիկ Հովհաննիսյան	90%

10.	Մյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	Սամվել Գրիգորյան	90%
-----	---	------------------	-----

»:

**Հավելված 2**  
**Հայաստանի Հանրապետության**  
**դատարանների նախագահների խորհրդի**  
**2018 թվականի հունվարի 25-ի թիվ 05L որոշման**

**«Հավելված 4**  
**Հայաստանի Հանրապետության**  
**դատարանների նախագահների խորհրդի**  
**2015 թվականի մայիսի 18-ի թիվ 25L որոշման**

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ, ՀՀ ԳԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳԱՏԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ, ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՆՈՂ ԳԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՏՈԿՈՍԱԶՓԵՐԸ**

<b>ա) Արդարադատության խորհրդի անդամներ</b>			
<b>N</b>	<b>Դատարան</b>	<b>Դատավոր</b>	<b>Հանձնվող գործերի տոկոսաչափ</b>
1.	ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան	Արմեն Խաչատրյան	75%
2.	ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	Սերգեյ Չիչոյան	75 %
3.	ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	Ռուզաննա Բարսեղյան	75 %
4.	ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան	Մարգարիտա Հարթենյան	75 %
5.	ՀՀ վարչական վերաքննիչ դատարան	Արա Բաբայան	75 %
6.	ՀՀ վարչական դատարան	Աղասի Դարբինյան	75 %
7.	ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան	Գագիկ Խանդանյան	75 %

<b>բ) Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամներ</b>			
<b>N</b>	<b>Դատարան</b>	<b>Դատավոր</b>	<b>Հանձնվող գործերի տոկոսաչափ</b>
1.	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	Սամվել Թադևոսյան	75%
2.	ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	Մխիթար Պապոյան	75%
3.	ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան	Նաիրա Գրիգորյան	75%
4.	ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան	Նարինե Բարսեղյան	100%

5.	ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան	Սլավիկ Թորոսյան	75%
6.	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	Մնացական Մարտիրոսյան	75%

**գ) Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամներ**

N	Դատարան	Դատավոր	Հանձնվող գործերի տոկոսաչափ
1.	ՀՀ վարչական վերաքննիչ դատարան	Հովսեփ Բեդկյան	75%
2.	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	Արսեն Բաբայան	75%
3.	ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	Ալեքսանդր Ազարյան	75%

**դ) Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորներ**

N	Դատարան	Դատավոր	Հանձնվող գործերի տոկոսաչափ
1.	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	Ռուբեն Վարդազարյան	100%
2.	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	Մնացական Մարտիրոսյան	25%

»: